



**Հայկական հուշարձանների ճանաչման ծրագիր /ԱՄԱՓ/** մշակութային հասարակական կազմակերպությունը ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ իրականացնում է Հայաստանի պատմամշակութային և բնության հուշարձանների վերաբերյալ հասարակության իրազեկության բարձրացմանը միտված երկարաժամկետ նախագիծ:

**Ծրագրի նպատակներն են՝**

- Հայաստանի պատմամշակութային և բնության հուշարձանների համար ստեղծել և տեղադրել բազմալեզու մուլտիմեդիա տեղեկատվական վահանակներ, ուղեցույց-նշաններ և ինտերակտիվ նյութեր:
- Նման աշխատանքներ իրականացնել Հայաստանի թանգարանների և հնագիտական վայրերի համար:
- Հայաստանի բնության հուշարձանների, բնության արահետների համար ստեղծել և տեղադրել բազմալեզու, մուլտիմեդիա բացատրական վահանակներ և ուղեցույց-նշաններ:
- Ստեղծել ինտերակտիվ նյութեր հուշարձանների տարածքում՝ զբոսաշրջիկների այցելությունը Հայաստան առավել իմաստալից դարձնելու համար:
- Խմբավորել հուշարձանները ըստ թեմաների և ստեղծել երթուղիներ՝ էլ ավելի հետաքրքիր դարձնելով դրանք զբոսաշրջիկների համար: Նպաստել տեղական համայնքների զարգացմանը, որպեսզի նրանք ավելի լավ կարողանան ծառայել երթուղիներով

ճամփորդող զբոսաշրջիկներին:

- Զարգացնել տուրիստական ենթակառուցվածքները՝ դարձնելով դրանք ինքնաբավ (հանգստի կանգառներ, ողջույնի կենտրոններ, ժամանակակից պայմաններ առանձին հուշարձանների տարածքում):
- Ստեղծել Հայաստանի տեսարժան վայրերը ներկայացնող բազմալեզու մուլտիմեդիա նյութեր, այդ թվում՝ “Աուդիոտուր” լսողական զբոսապատյուններ, տեսանյութեր, առցանց տեղեկատվություն և այլն):
- Ստեղծել հայկական հուշարձանների մասին տվյալների էլեկտրոնային շտեմարան՝ ի լրումն «Հայաստանի ժառանգություն» կայքէջի:
- Հուշարձանների տարածքը հասանելի դարձնել հատուկ կարիքներով այցելուների համար՝ համապատասխան միջոցառումների կազմակերպմամբ:

**2010 թ. ծրագիրը**

2010 թ. նախատեսում ենք ընդլայնել մեր հիմնական աշխատանքը՝ ստեղծելով հուշարձանախմբեր ըստ թեմաների, և Աուդիո տուրեր: Այս տարվա ծրագրում տեղ գտած հուշարձաններն ավելի բազմաբնույթ են (հնագիտական պեղումների վայրեր, թանգարաններ, աուդիոտուրեր) և Հայաստանը բացահայտելու ավելի ինքնատիպ միջոցների ստեղծումը (աուդիովիզուալ ներկայացումներ, GPS նավիգացիոն համակարգով տուրեր, էլեկտրոնային կրպակներ, առցանց ինտերակտիվ տեղեկատվություն):

2010 թ. մենք տեղադրելու ենք ավելի քան 240 տեղեկատվական վահանակներ և ճանապարհային ուղեցույց-նշաններ, Հայաստանի 61 տարածքներում՝ 13 հուշարձան, 2 թանգարան, բնության արահետ (ծաղիկներ, թռչուններ և վայրի բնություն) և երկու երթուղիներ՝ «Թագավորներ, թագուհիներ և իշխաններ և «Քաղաքակրթության օրրան»: Ծրագրում նախատեսված է ստեղծել և տեղադրել բրայլյան այբուբենով (հինգ լեզուներով) տեղեկատվական վահանակներ թույլ տեսողություն ունեցող այցելուների համար, ինչպես նաև «Հայաստանի ժառանգություն» ինտերակտիվ կայքէջի ստեղծումը:

ԱՄԱՓ-ի ծրագիրը ֆինանսավորվում է ծրագրի գլխավոր հովանավոր «ՎիվաՄեյլ-ՄՏՄ»-ի, Գյումրում Իտալիայի պատվո հյուպատոսի, USAID/CAPS-ի, ԱՄՆ դեսպանի մշակութային հիմնադրամի, Նորվեգիայի արտոգործնախարարության և այլ հովանավորների կողմից:

